ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7. 1965 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստան» հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել պատմական գիտությունների թեկնածու Ջ. Ս. Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914—1916 թթ.» խորագրով ստվարածավալ աշխատությունը։ Հեղինակի քննարկման առարկան է գարձել հայ ժողովրդի արևմտահայ հատվածի վերջին շրջանի պատմության այն կենճոտ պրոբլեմներից մեկը, որի գիտական խոր և բազմակողմանի ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ լայն ծավալ է ստացել միայն վերջերս։ Հասկանալի է, որ այդ ուղղությամբ դեռևս կան շատ անելիքներ, կան շատ հարցեր, որոնք անհրաժեշտ գիտական խորությամբ չեն լուսաբանված, կան նաև ասպիսի հարցեր, որոնք թերի են լուսաբանված կամ կարոտ են լուսաբանության։ Այս իսկ տեսակետից Ջ. Կիրակոսյանի աշխատությունը մի լուրջ քայլ է, որը գալիս է լրացնելու մեր պատմագրության մեջ եղած այդ դատարկը։

Աշխատությունում ուսումնասիրվող հարցերը լուսաբանված են արխիվային և գրական հարուստ նյութերի հիման վրա։ Հեղինակը լայն չափով օգտագործել է նաև սփյուռքահայ մամուլը։ Նա գիտական շրջանառության մեջ է դրել նոր փաստաթղթեր, փաստեր, հանգել է հետաքրքիր եզրակացություններ։

Գիրքը բաղկացած է չորս գլուխներից, վերջաբանից, օգտագործված նյութերի և գրականության ցանկից, անձնանունների ու տեղանունների ցանկից։

Աշխատության առաջին՝ «Արևմտահայության ծանր գոյավիճակը Թուրքիայում պատերազմի նախօրյակին» գլխում ցույց է տրված 1908—1909 թվականների երիտթուրքերի հեղափոխությունից հետո Թուրքիայում՝ ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ տարվող դաժան ազգային ճնշման, ասիմիլատորական և մասսայական ջարդերի քաղաքականությունը։

Չնայած դրան, դաշնակցական կուսակցությունը համագործակցության մեջ էր մտել երիտթուրքերի հետ։ Հենվելով պատմական փաստերի վրա, հեղինակը բացահայտում է երիտթուրքական-դաշնակցական համագործակցության ամբողջ վնասակարությունը արևմտահայության ազատագրական պայքարի համար։ Այդ կապակցությամբ նա շատ ճիշտ նշում է. «Թե՛ դաշնակցությունը, և թե՛ հնչակյան կուսակցությունը չունեին հետևողական, ծրագրված և կայուն դիրքորոշում երիտթուրքերի վարած քաղաքականության հանդեպ և, հետևաբար, ի վիճակի չէին ճիշտ ուղղություն տալ այդ քաղաքականության դեմ հասունացող ազատագրական պայքարին»։ Հեղինակը ցույց է տալիս կայսրության ազգային փոքրամասնություններին, այդ թվում նաև հայերին հալածելու և բնաջնջելու երիտթուրքական քաղաքականության պատճառները։ Հույների և սլավոնական ժողովուրդների 19-րդ դարի ազգային-ազատագրական պայքարի

հաջողությունից հետո Թուրքիայի կառավարող շովինիստական շրջանները հանգեցին ողջամտությունից զուրկ և վնասակար այն եզրակացությանը, որ ազգային փոքրամասնությունները լուրջ սպառնալիք են հանդիսանում Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման համար։ Ընդ որում, նրանք փորձ անգամ չկատարեցին այդ սպառնալիքը փնտրել կայսրության ներսում օրավուր աճող և սրվող սոցիալական և ազգային այն ներհակությունների մեջ, որոնք վաղուց արդեն պահանջում էին իրենց արմատական լուծումը։ Թուրքիայի և թուրք ժողովրդի համար չափազանց կենսական այդ հարցերն արհամարհելով, երիտթուրքերը բռնեցին ազգային փոքրամասնությունների բնաջրնջման բարբարոսական ուղին։ Մասնավորապես հայերի նկատմամբ այդ քաղաքականությունը կիրառելիս, նրանք փորձում էին իրենց չարագործություններն արդարացնել նրանով, որ հայերը կանգնած են պանթյուրքական զավթողական պլանների իրագործման ճանապարհին։ Այս կապակցությամբ Հերբերտ Ադամս Գիբոնսը իր հայտնի աշխատությունում գրել է. «Հայ տարրն անմիջապես նոր կուսակցության (երիտասարդ թուրքերի) համար սկսեց ներկայանալ որպես լուրջ վտանգ։ Այդ, այսպես կոչված, երիտթուրքերը սկսեցին հետապնդել հայերին ճիշտ այնպես, ինչպես նրանց հետապնդում էր Աբդուլ Համիդը, երկյուղելով, որ նրանք կարող են չափազանց աչքի ընկնող դեր խաղալ Թուրքիայի վերածննդի գործում։ Սահմանադրությունը, որ հայերը ողջունեցին որպես քաղաքական ազատագրման արշալույս, համարյա անմիջապես, չարաբաստիկ կերպով դարձավ նրանց մահվան դատավճիռը»[1]։

Թուրքական ազգային բուրժուազիան և նրա իշխող «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը դիմում էին ամենազարհուրելի մեթոդների հայերին որպես իրենց ուժեղ մրցակցի, տնտեսապես քայքայելու և բոլոր իրավունքներից զրկելու համար։ Թուրքական բուրժուազիային կատաղեցնում էր այն, որ հավասար տնտեսական ու քաղաքական պայմաններում թուրքերը չէին կարողանում դիմանալ հայերի մրցակցությանը։ «Միայն մրցակցի անէացումով էր հնարավոր ապահովել թուրքերի ապագան» (էջ 66)։

Թուրքական բուրժուազիայի հայաջինջ քաղաքականությունը բխում էր ոչ միայն տնտեսական նկատառումներից, այլև նրա, ինչպես նշվեց վերևում, պանթյուրքական նվաճողական պլաններից։ Ինչպես բազմիցս հայտարարել են երիտթուրքական կուսակցության գործիչները, մահմեդական աշխարհի մեջ «սեպի նման խրված» հայերը խանգարում էին Օսմանյան կայսրության հետ Անդրկովկասի ու Ռուսաստանի այլ շրջանների մահմեդական ազգաբնակչության «միավորմանը»։

Այսպես, երիտթուրքերի «որգան հանդիսացող «Իկդամ» թերթը, տակավին 1914 թ. փետրվարին, առաջարկում էր «բոլոր հայերին Արևելյան Անատոլիայից աքսորել Միջագետք, իսկ նրանց տեղը մահմեդականներ բերել»[2]։

Ըստ երիտթուրքերի պարագլուխների, «Հայաստանը խանգարում էր մահմեդականների միասնության ու թուրքական միության ստեղծմանը՝ թուրքական ռասան Կովկասի, Պարսկաստանի ու կենտրոնական Ասիայի ազգակից բնակ-

---

[1] Герберт Адамс Гиббонс. Самая черная страница новейшей истории. Последние избиения в Армении. П-д, 1916, стр. 22.

[2] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 38, л. 83.

չության հետ միավորելու ճանապարհին»[3]։ Դրախոսվող աշխատության հեղինակը բերում է երիտթուրքերի կուսակցության պարագլուխներից մեկի՝ դոկտոր Նազրմի հետևյալ խոսքերը. «Մի մոռանաք, որ մեր նախահայրերը Թուրանից են եկել, և այսօր Անդրկովկասի, ինչպես և Կասպից ծովից դեպի արևելք տարածվող ընդարձակ հողամասերի վրա թուրք ցեղերն ապրում են գրեթե միատարր, ավա՛ղ, մեր դարավոր թշնամի Ռուսաստանի լծի տակ։ Մեր քաղաքական հորիզոնը բաց է մնում այդ ուղղությամբ միայն, և մենք պետք է իրականացնենք թուրք ցեղի միությունը Միջերկրականից մինչև Արալի ծովը» (էջ 79)։ Ահա թուրք դավթիշների դառանցանքը, որի կենսագործման համար նրանք ծրագրել էին ոչնչացնել հայ ժողովրդին, որի ազգային-ազատագրական շարժումը համարվում էր գլխավոր խոչընդոտը համաթուրքական պլանների իրականացման ճանապարհին։

Հեղինակը շատ ճիշտ նշում է, որ հայ ժողովրդի պայքարը թուրք ջարդարարներից ազատագրվելու համար, արդարացի ձգտում էր։ Այս կապակցությամբ շատ տեղին կլիներ, եթե հեղինակը կանգ առներ մեր պատմագրության մեջ տեղ գտած այն սխալ տեսակետի վրա, որ իբր եթե հայերը ազատագրական պայքար չմղեին, թուրքերը նրանց նկատմամբ ջարդարարական քաղաքականություն չէին վարի։ Ի դեպ, պետք է նշել, որ ժամանակակից թուրք պատմագրությունը երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը արդարացնելու համար մեղադրում է հայերին, որ նրանք ապստամբում էին, որպեսզի անջատվեն Օսմանյան կայսրությունից. դրա համար էլ իրավացի կերպով նրանք պատժվեցին։ Այսպես, հայտնի թուրք պատմաբան պրոֆեսոր Յուսուֆ Հիքմեթ Բայուրը իր «Թուրքական պետության արտաքին քաղաքականությունը» աշխատությունում գրում է, որ «երիտթուրքերի կողմից կիրառված պատժիչ միջոցառումները թելադրվում էին հայերի ապստամբությամբ»[4]։ Ինչպես Յուսուֆ Հիքմեթ Բայուրը, այնպես էլ Էսատ Ուրուսը, Սադրի Մաքսուդի Արսալը, Թևֆիկ Բրյիքլրօղլուն, Ահմեդ Էմին Յալմանը և ուրիշ թուրք պատմաբաններ կաշվից դուրս են գալիս «հաստատելու» համար, որ ոչ-մահմեդական բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայերը, Օսմանյան կայսրությունում միշտ էլ ապրել են լավագույն պայմաններում և օգտվել ամեն կարգի քաղաքական իրավունքներից, ուստի և հարկ չկար, որ նրանք պայքարեին իրենց ազատագրման համար։ Դրախոսվող աշխատության առաջին գլխում բերված շատ հետաքրքիր և հավաստի փաստերը գալիս են հերքելու թուրք ֆալսիֆիկատորների՝ հայերի նկատմամբ երիտթուրքերի վարած վայրագ քաղաքականության արդարացումը։

Ջ. Կիրակոսյանի աշխատության երկրորդ «Հայկական հարցի վերաբացումը առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի սկզբին» գլխում, բազմաթիվ փաստերի հիման վրա, ցույց է տրված, թե ինչպես իմպերիալիստական պետությունները Բեռլինի կոնգրեսից սկսած արևմտահայերի ազատագրական պայքարը դարձնելով միջազգային դիվանագիտության հարց, ամեն անգամ օգտագործել են այն, երբ հարկավոր էր թուրքական կառավարության վրա ճնշում գործ դնել՝ Թուրքիայի նկատմամբ իրենց պլանները իրագործելու համար։

[3] Poidebard A., La lutte pour la route des Indes. Notes de voyage de Paris à Tiflis par Bagdad, Paris, 1923, p. 229.

[4] Bayur Jusuf Hikmet, Türkiye devletinin dış siyasası, Istambul, 1938, s. 37.

Հեղինակը, հայկական հարցի կապակցությամբ անդրադառնալով Արևելյան հարցին, շատ ճիշտ նշում է. «Արևելյան հարցի բուն ազդակը օսմանյան բռնապետության տիրապետության տակ դարեր շարունակ ճնշված և կեղեքված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարն էր, որը նոր թափ էր ստացել 19-րդ դարի սկզբից և որն անմիջապես որդեգրել էր եվրոպական դիվանագիտությունը» (էջ 95)։ Մեծ պետությունները առերես հանդես էին գալիս որպես թուրքական լծի դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումների հովանավորողներ, բայց «իրականում թուրքական կառավարողների հետ այդ շարժման հաշվին առևտուր անելու, այս կամ այն արտոնություններ, կոնցեսիան կամ նույնիսկ տերիտորիան կորզելու համար» (էջ 96)։ Ժամանակակից թուրք պատմագրությունը, օգտվելով մեծ պետությունների այդ քաղաքականությունից, կաշվից դուրս է գալիս, որպեսզի ցույց տա, որ ոչ մի Արևելյան հարց և նրա մի մասը հանդիսացած հայկական հարց գոյություն չի ունեցել, որ դա ստեղծված է լոկ եվրոպական դիվանագիտության կողմից։ Դա նշանակում է, ինչպես ճիշտ նշում է հեղինակը, «Թուրքական բռնապետության դեմ մաքառած ժողովուրդների ազատագրական պայքարի անտեսում, թուրքական միջնադարյան ֆեոդալական վայրենի ճնշման արդարացում»։ Այստեղ տեղին կլիներ, եթե հեղինակը այդ դրույթը հաստատելու համար հենվեր ոչ թե «Историческая энциклопедия»-ի վրա, այլ մեջբերումներ կատարեր թուրք հեղինակների աշխատություններից, որոնք, ինչ խոսք, ավելի համոզիչ կլինեին։

Եվրոպական պետությունները, հաշվի առնելով Արևմտյան Հայաստանի Ռուսական կայսրության հետ սահմանամերձ լինելը, և վերջինիս ազդեցության ուժեղացման երկյուղը, միասին հանդես էին գալիս Թուրքիայի «պաշտպանների» դերում, երբ ստեղծվում էր ռեալ պայմաններ Ռուսաստանի օգնությամբ Արևմտյան Հայաստանում վերանորոգումներ անցկացնելու, կամ նրա որոշ մասերը Ռուսաստանին միացնելու հնարավորություն։

Հեղինակը կարմիր թելի պես անց է կացնում այն միտքը, որ մեծ պետությունների տնտեսական, քաղաքական և ռազմա-ստրատեգիական շահերի բախումը Արևմտյան Հայաստանում և նրանց հակամարտությունը, թուրքական կառավարող շրջանները միշտ էլ ճարպկությամբ օգտագործել են հայկական հարցը թուրքական եղանակով լուծելու համար։

Աշխատությունում համոզիչ փաստերով ընդգծված է արևմտահայերի ռուսական կողմնորոշման հարցը։ Այստեղից էլ արևմտաեվրոպական և ամերիկյան գործակալությունները Արևմտյան Հայաստանում իրենց բազմամյա գործունեության փորձից ելնելով, համոզվեցին, որ, չնայած իրենց հակառուսական ջանքերին, արևմտահայերի համակրանքը շարունակում էր մնալ Ռուսաստանի կողմը, որովհետև հայերի մեծ մասը թուրքական բիրտ լծից ազատագրվելը կապում էր Ռուսաստանի օգնության հետ և միայն նրան էր վստահում։

Աշխատության առավելություններից մեկն էլ այն է, որ հեղինակը, մեր կարծիքով, ճիշտ է գնահատում հայ կամավորական շարժումը, գտնելով նրա ղեկավարների՝ դաշնակցական և հնչակյան կուսակցությունների հետապնդած նպատակները շարքային կամավորականների ունեցած ձգտումներից։ Խոսելով կամավորական դրուժինաների ռուսական բանակին ցույց տված օգնության մասին, Ջ. Կիրակոսյանը շատ հակիրճ նկարագրում է Անդրանիկի, Քեռու և Գայի գործունեությունը։ Նա, հետաքրքիր փաստերի հիման վրա, միան-

գամ ևս ապացուցում է, որ Անդրանիկը հայ ժողովրդի ազատագրական շարժման ականավոր դեմքերից էր։ «Անցնելով պայքարի բարդ ուղի,— գրում է հեղինակը,— Անդրանիկը նշմարեց հայ ժողովրդի ազատագրության ճիշտ ուղին՝ անբակտելի բարեկամությունը Սովետական Ռուսաստանի, ռուս ժողովրդի հետ» (էջ 214)։

Աշխատության երրորդ գլուխը նվիրված է 1915 թ. Մեծ եղեռնին։ Այստեղ հեղինակը հանդամանորեն կանգ է առնում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կատարված՝ հայերի մասսայական աքսորի և ջարդերի հարցի վրա։ Նա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ արևմտյան հայերի բնաջնջման պլանը իթթիհատականների կողմից մշակված է եղել նախքան առաջին համաշխարհային պատերազմը։ Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու առաջին ամիսներին, կովկասյան ճակատում թուրքական բանակի կրած պարտությունը երիտթուրքերի կառավարությունը օգտագործեց սահմանամերձ շրջանները «անհարազատ» տարրերից մաքրելու քողի տակ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Օսմանյան կայսրության այլ վայրերի հայությանը զանգվածային աքսորի և ֆիզիկական բնաջնջման ենթարկելու նպատակով։ «Իրենց անիրազեկությունն են դրսևորում այն մարդիկ, որոնք տուրք տալով թուրքական ստահոդ պնդումներին, հավատում են, որ թուրքական կառավարողները, իբր թե, ստիպված էին այդպիսի քայլերի դիմել, ելնելով պատերազմական ծանր կացությունից և հայերի կողմից թուրքական պետությանը սպառնացող վտանգի կանխման շահերից» (էջ 231)։

Նկարագրելով հայ ազգաբնակչության անօրինակ կոտորածները և գազանային բնաջնջումը, հեղինակը միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպես թուրք ժողովրդի աշխատավորական խավերը չէին բաժանում երիտթուրքական կլիկի արյունոտ քաղաքականությունը և երբեմն ջանում էին իրենց ուժերի ներածին չափով փրկել հայերին։ Այս գլխում նկարագրված է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի որոշ վայրերի հայերի ինքնապաշտպանությունը։ Հեղինակը հատկապես կանգ է առել Վանի և Մուսա լեռան հայերի հերոսական պաշտպանության նկարագրության վրա։ Ուշագրավ է նաև Սասունի, Շապին Գարահիսարի, Կիլիկիայի հայերի հերոսական պայքարը՝ թուրք ջարդարարների դեմ։

Աշխատությունում, բազմաթիվ սկզբնաղբյուրների հիման վրա, հերքվում է մեր պատմագրության մեջ տեղ գտած այն սխալ տեսակետը, թե իբր հայերի մասսայական ջարդը և աքսորը հետևանք էր հայ կամավորական շարժման։ «Հայ կամավորական շարժումը,— կարդում ենք գրախոսվող աշխատությունում բերված մի փաստաթղթում,— ոչ մի ժամանակ հայ բնաջնջման պատճառ չէր կարող լինել, եթե այդ ծրագիրը կանխավ ծրագրված չլիներ, ինչպես կառավարությունը շատ անգամ հանցավորները պատժած է, առանց անմեղներին դիպչելու»։ Ջանտեսելով դաշնակցական կուսակցության ավանտյուրիստական, վնասակար գործելակերպը, փաստերի ուսումնասիրությունը հեղինակին հանգեցրել է այն ճիշտ եզրակացության, որ անկախ դրանից թուրքական կառավարությունը արդեն որոշել էր կենսագործել իր վաղուց մշակած ծրագիրը՝ բնաջնջել հայերին Օսմանյան կայսրությունում, հայկական հարցը լուծել յուրովի՝ կոտորածների ճանապարհով։

---

5 ՀՍՍՌ, ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 618, թթ. 5—8 (գրքի 232-րդ էջը)։

Հեղինակը ընդգծում է նաև այն ճիշտ միտքը, որ դաշնակցական և հնչակյան կուսակցությունները ապստամբություն բարձրացնելու, թուրքական բանակին թիկունքից հարվածելու և ոչ մի գործնական մտադրություն չունեին, ինչպես այդ վերագրվել էր նրանց թուրքական կառավարության կողմից։ «Իթիհադ-դաշնակցական համագործակցությունը, որ սահմանադրությունից ի վեր շարունակվում էր մինչև պատերազմի նախօրյակը, ամլացրել էր այդ կազմակերպություններին, նրանց դարձրել նախաձեռնությունից զուրկ, հասունացող իրադարձությունների ետևից ընթացող մարդկանց խմբերի»։

Աշխատությունում շատ ճիշտ են քննադատվում հայ ազգային կուսակցությունների՝ դիմադրության պատրաստ չլինելը, իրենց կոնկրետ ծրագիրն ու անելիքները չիմանալը, նրանց անտեղյակ լինելը թուրքական կառավարող շրջանների շարանենգ ծրագրերին։ Փաստերը ցույց են տալիս, որ մինչև մասսայական ջարդը դաշնակցականներն ամեն կերպ աշխատում էին լեզու գտնել թուրք ջարդարարների հետ։

Կիրակոսյանի աշխատության վերջին՝ «Միջազգային իմպերիալիզմը թուրքական ջարդարարության մեղսակից» գլխում գիտական խորաթափանցությամբ բացահայտվում է միջազգային իմպերիալիզմի նողկալի դերը հայ բնակչության մասսայական աքսորման և ոչնչացման գործում։ Հատկապես ընդգծված է թուրք ջարդարարների դաշնակից՝ կայզերական Գերմանիայի անմիջական մասնակցությունը հայկական ջարդերին։

Հանդամանորեն խոսվում է նաև օսմանյան վանդալիզմի նկատմամբ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հակահայկական դիրքորոշման մասին։ Այդ կապակցությամբ հեղինակը մեջ է բերում Ավետիք Իսահակյանի՝ Հովհ. Թումանյանին գրած նամակից մի հատված, որտեղ ասված է. «Եվրոպան ոչ միայն չի ազնիվ մեզ, այլև թշնամի է և հրճվում է հայկական բնաջնջումով, որուն համոզվում եմ փաստերի վրա։ Ինձ համար Անգլիան և Ֆրանսիան այնման դաժան գոնվեցան, ինչման Գերմանիան. քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում. պետք է երես դարձնել այս ավազակներից և մոտենալ Ռուսաստանին» (էջ 372)։

Հեղինակը վեր է հանում Անգլիայի, Ֆրանսիայի և ցարական Ռուսաստանի խարդախ դիվանագիտական խաղերը հայկական հարցում։ Նա կոնկրետ փաստաթղթերի հիման վրա ցույց է տալիս, որ նրանցից ամեն մեկը հայկական հարցը օգտագործում էր իր սեփական գավթողական պլանները Մերձավոր արևելքում իրագործելու համար։ Նույնիսկ Արևմտյան Հայաստանը հայերից մաքրելուց հետո էլ նրանք «մտահոգված» էին հայկական հարցով, և 1916 թ. այդ հարցը նորից մի միջոց էր իմպերիալիստական դիվանագիտության համար՝ համաշխարհային գաղութային մեծ քաղաքականության քուրայում։ Հեղինակին հաջողվել է ցույց տալ, որ դաշնակցական կուսակցության պարագլուխները սոսկ խաղալիք էին այդ դիվանագիտության ձեռքում։

Հեղինակը հանդամանորեն լուսաբանում է ցարիզմի բաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, ինչպես նախքան պատերազմը, այնպես էլ, հատկապես, պատերազմի տարիներին, երբ ռուսական կովկասյան բանակը գրավել էր ողջ Արևմտյան Հայաստանը։ Սկզբնաղբյուրների հիման վրա Կիրակոսյանին հաջողվել է ցույց տալ Արևմտյան Հայաստանը գաղութացնելու և Ռուսաստանին միացնելու ցարական կառավարության հետապնդած նպատակները։ Բազմաթիվ փաստերով լուսաբանված է կովկասյան բանակի գլխավոր շտաբի

պետ գեներալ Յուդենիչի ռեակցիոն հակահայկական քաղաքականությունը, որը փաստորեն նպաստում էր Արևմտյան Հայաստանը հայերից մաքրելու թուրք ջարդարարների քաղաքականությանը։ Այստեղից հեղինակը հանգել է այն ճիշտ հետևությանը, որ ցարիզմը շարդարացրեց հայ բուրժուազիայի ազգայնական կուսակցությունների այն հույսը, որ նրանք կապել էին ցարական կառավարության «ազատագրական» միսիայի հետ։

Աշխատությունում փաստացի կերպով լուսաբանվում է բոլշևիկների հետևողական և ճիշտ տակտիկան հայկական հարցում։ Բոլշևիկները դատապարտելով կամավորական շարժումը, նշում էին, որ իմպերիալիստական պատերազմը ոչ թե ճնշված ու փոքր ժողովուրդների ազատագրման համար էր բռնկվել, ինչպես ներկայացնում էին պատերազմի հրձիգները, այլ այդ ժողովուրդների երկրները անեքսիայի ենթարկելու և գաղութացնելու համար։

Ահա այն հիմնական հարցերը, որոնք գրախոսվող աշխատությունում լուսաբանվել են մարքսիստական դիրքերից և, մեր կարծիքով, ստացել ճիշտ լուծում։

Այս բոլորը մեզ հիմք են տալիս ասելու, որ Ջ. Կիրակոսյանի մենագրությունը լուրջ գիտական ներդրում է արծարծված պրոբլեմի՝ հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմության ուսումնասիրության գործում։

Գրախոսվող աշխատությունն ավելի կշահեր, եթե հեղինակը տար օգտագործած աղբյուրների և գրականության տեսություն, որը շատ կարևոր է նման ծավալուն ուսումնասիրության համար։

Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր